

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՎՊՄԻ-ի ռեկտոր

_____ Գ.Կ. Խաչատրյան

“ 30” __04__ 2010թ.

ԿԱՐԳ

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության քոլեջից (այսուհետ՝ ՎՊՄԻ քոլեջ) մեկ այլ նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ուսանողների տեղափոխման

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

(արձանագր. թիվ _4_ “_30_” ____04____ 2010թ.)

Սույնը կանոնակարգում է “Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսվող գործընթացների իրականացումը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգի իմաստով տեղափոխություն է համարվում մեկ նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից, արհեստագործական հոսքով ավագ դպրոցից /այսուհետ՝ մասնագիտական ուսումնական հաստատություն կամ ավագ դպրոց/ ուսանողի /աշակերտի/ տեղափոխվելը մեկ այլ մասնագիտական ուսումնական հաստատություն՝ նույն կամ հարակից մասնագիտությամբ ուսումը շարունակելու նպատակով:

1.2. Սույն կարգով կանոնակարգվում են հետևյալ տեղափոխությունները՝

ա) բարձրագույն ուսումնական հաստատությունից մասնագիտական ուսումնական հաստատություն:

բ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն:

գ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն:

դ) նախնական մասնագիտական ուսումնական՝ հաստատությունից այլ նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն:

ե) արհեստագործական հոսքով ավագ դպրոցից նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն:

1.3. Սույն կարգի իմաստով տեղափոխություն չի համարվում ՎՊՄԻ քոլեջի ներսում նույն մասնագիտությամբ ուսանողի՝ կրթության մի ձևից /առկա, հեռակա, հեռավար, դրսեկություն/ մյուսին անցնելը:

1.4. Ուսանողի տեղափոխությունն իրականացվում է նրա դիմումի համաձայն՝ երկու ուսումնական հաստատությունների ղեկավարների համաձայնությամբ՝ ընդունող ուսումնական հաստատությունում տվյալ մասնագիտության համար լիցենզիայով սահմանված տեղերում թափուր տեղերի առկայության դեպքում:

1.5. Լիցենզիայով սահմանված թափուր տեղեր չլիցենզիո դեպքում տեղափոխությունը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է կրթության կառավարման պետական լիազորված մարմնի թույլտվությամբ:

1.6. Սույն կարգի իմաստով հարակից են համարվում մասնագիտության դասիչի առաջին երկու թվանշաններով նույնական մասնագիտությունները:

1.7. Ուսանողի տեղափոխությունը ոչ պետական, հավատարմագրում չունեցող ուսումնական հաստատություններից պետական մասնագիտական ՎՊՄԻ քոլեջ չի թույլատրվում:

1.8. Ուսանողների տեղափոխությունն իրականացվում է կրթության բոլոր ձևերով:

1.9. Այլ պետությունների ուսումնական հաստատություններից ուսանողի տեղափոխությունը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է կրթության կառավարման պետական լիազորված մարմնի թույլտվությամբ:

2. ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2.1. Նույն տիպի ուսումնական հաստատությունից ՎՊՄԻ քոլեջ նույն մասնագիտությամբ ուսանողի տեղափոխությունը կարող է իրականացվել ողջ ուսումնական տարվա ընթացքում, ամբողջ ուսումնառության շրջանում:

2.2. Նույն տիպի ուսումնական հաստատությունից հարակից մասնագիտությամբ ՎՊՄԻ քոլեջ ուսանողի տեղափոխությունը, ինչպես նաև ՎՊՄԻ քոլեջի ներսում հարակից մասնագիտությամբ ուսանողի տեղափոխությունն իրականացվում է ամառային կամ

ծմեռային արձակուրդների շրջանում՝ մինչև ուսումնական տարին կամ կիսամյակը սկսելը:

2.3. Ավարտական կուրսում, հարակից մասնագիտությամբ ուսանողի տեղափոխությունը, որպես կանոն, կարող է իրականացվել միայն ուսումնական տարվա սկզբում:

3. ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Տեղափոխվել ցանկացող ուսանողը ողջամիտ ժամկետում դիմում է ներկայացնում ՎՊՄԻ-ի ռեկտորին՝ տեղափոխվելու համար ուսումը շարունակելու նպատակով: Տեղափոխման վերաբերյալ համաձայնություն ստանալու դեպքում նա համաձայնությունը հաստատող պաշտոնական գրության հետ միասին դիմում է ներկայացնում իր ուսումնական հաստատության տնօրենին:

3.2. Այն ուսումնական հաստատության տնօրենը, որտեղ ցանկանում է տեղափոխվել ուսանողը /աշակերտը/ ՎՊՄԻ-ի ռեկտորի անունով ձևակերպում է հետևյալ բովանդակությամբ գրություն «Մեզ է դիմել Ձեր հաստատության _____ մասնագիտության _____ կուրսի _____ համակարգի ուսանող ազգանուն, անունը: Տնօրինությունը չի առարկում նրա տեղափոխմանը: Խնդրում ենք նրա անձնական գործը՝ ազատման հրամանի հետ միասին ուղարկել մեր հաստատության հասցեով կամ անձամբ ուսանողի միջոցով»:

3.3. ՎՊՄԻ-ի ռեկտորը, ստանալով գրությունը և ուսանողի դիմումը ձևակերպում է հետևյալ հրամանը «_____ մասնագիտության _____ կուրսի _____ հիմունքներով ուսանող _____-ին ս/թ _____-ից ազատել քոլեջից՝ այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու կապակցությամբ»:

3.4. Ուսանողի՝ ուղարկվող անձնական գործում դրվում է ընդունելության դիմումը, քննական թերթիկը, քննական գրավոր աշխատանքները, արտոնությամբ ընդունված լինելու դեպքում՝ հիմքերը, ընդունելության հրամանի քաղվածքը, ստուգարքային գրքույկը, լրացված ակադեմիական տեղեկանքը, ազատման հրամանի քաղվածքը: Ուսումնական կիսամյակի ընթացքում տեղափոխվող ուսանողի անձնական գործում դրվում է նաև քաղվածք դասամատյանից՝ տվյալ կիսամյակում ստացած գնահատականների վերաբերյալ: ՎՊՄԻ-ում մնում է ուղարկված փաստաթղթերի ցանկը՝ հաստատված ռեկտորի կողմից: Ռեկտորը անձնական գործի հետ միասին ուղարկում է նաև հետևյալ բովանդակությամբ պաշտոնական գրություն «Ձեզ է ուղարկվում _____ մասնագիտության _____ կուրսի _____ հիմունքներով ուսանող _____ ի անձնական գործը՝ ըստ կից ցուցակի»:

3.5. ՎՊՄԻ-ի ռեկտորը ստանալով ուսանողի անձնական գործը տալիս է հետևյալ հրամանը «_____ ին ս/թ _____ ից տեղափոխման կարգով ընդունել _____ մասնագիտության _____ կուրս՝ _____ հիմունքներով սովորելու»:

3.6. Արտոնությամբ ընդունված ուսանողը պահպանում է իր համար սահմանված արտոնությունները:

3.7. Անվճար համակարգի ուսանողը, որպես կանոն, տեղափոխվում է անվճար համակարգ, եթե տեղափոխության արդյունքում ուսումնառության ժամկետների փոփոխություն տեղի չի ունենում: Անվճար համակարգի ուսանողի տեղափոխության մասին երկու ուսումնական հաստատությունների ղեկավարները եռօրյա ժամկետում տեղյակ են պահում նախարարությանը: Տեղափոխման արդյունքում ժամկետների փոփոխություն տեղի ունենալու դեպքում անվճար համակարգում ընդունելու հարցը որոշվում է նախարարության համաձայնությամբ:

3.8. Վճարովի համակարգի ուսանողի տեղափոխության ժամանակ ուսման վարձի հետ կապված հարցերը լուծում են երկու ուսումնական հաստատությունների ղեկավարները՝ իրենց համաձայնությունը տալու ժամանակ:

3.9. ՎՊՄԻ-ի ռեկտորը տեղափոխված ուսանողի համար ծրագրային և ակադեմիական տարբերությունները հանձնելու ժամկետ է սահմանում, բայց 6 ամսից ոչ ավել:

3.10. Տեղափոխման համար ծրագրային և ակադեմիական տարբերությունների առկայության խոչընդոտ հանդիսանալը որոշում է ՎՊՄԻ-ի ռեկտորը՝ իր համաձայնությունը տալու ժամանակ, հաշվի առնելով դրանց հանձնման 6 ամսյա ժամկետի հանգամանքը: